№ 33 Կիրակի, Հոկտեմբերի 23—1866. № 33.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առևտրական գազէթ:

Հրատարակվում է շաբաթը մի անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յանվարը քաղաքումս՝ 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթում հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Վաճառականը» 1867 թւին: Տէրութեան կարգադրութիւնները: Թիֆլիսի քաղաքական կառավարութեան կանոնադրութիւնը: (շարունակութիւն): Զանազան և առևտրական տեղեկութիւններ:

„ՎԱՃԱՌԱԿԱՆԸ„
1867 ԹՈՒԻՆ.

Ինչպէս հրատարակել էինք „Վաճառականի„ 30-դ № ումը 1867 թւին „Վաճառականը„ կտպվի էնպիսի թերթերի վրայ, որ ամիսը հիմիկվան 4 կէս թերթի տեղ 5-ից մինչև 6-ը լինի իր մեծութենով: Գալ տարվան ստորագրվողները կստանան ձրիաբար „Առևտրական բառարան„, որի մէջ ամփոփված կլինին թէ առուտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռուսի փողի հետ համեմատելով: 1867 թւին „Վաճառականի„ մէջ կտպվին շարունակ ամեն նումերումը „Ռուսաց տելեգրաֆի ընկերութենից„ ստացած թէ առուտուրին և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: „Վաճառականի„ գինը գալ տարի թէ քաղաքումս և թէ դուրսը կլինի 5 մ. Գալ տարի „Վաճառականը„ կդուրս գայ հինգշաբթի օրերով:

Հիմիկվանից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքումս՝ „Վաճառականի„ խմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երիցեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է դառնան ուղղակի „Վաճառականի„ խմբագրողին էս հասցէով՝ „Վաճառականի„ խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսումը„, իսկ Ռուսերէն՝ „Редактору Тифлисскаго Торговаго листка Егору Тер-Александрову въ Тифлисѣ„.

Խնդրում ենք 1867 թւի մեր գազեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ մինչև էս տարվան նոյեմբերի վերջը, որ կարողանանք ստորագրվողների թւի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Թիֆլիսի քաղաքական կառավարութեան կանոնադրութիւնը:

Շարունակութիւն *

§ 25. Եթէ բարեկարգող քաղաքական կառավարութիւնը անկանոն կամ իր իրաւունքից դուրս կարգադրութիւն անէ, իշխանութենից նշանակված անդամը պէտք է յայտնէ էդուր մասին բարեկարգող քաղաքական կառավարութենին նիստի ժամանակը բերանացի և եթէ նրա կարծիքը չընդունվի, էն ժամանակը նա կարող է, եթէ հարկաւոր համարէ, թղթով բողոքէ նրանց կարգադրութենի վրայ և մի և նոյն ժամանակը պարտական է յայտնել էդուր մասին դաւառապետին:

§ 26. Բարեկարգող քաղաքական կառավարութիւնը գրագրութիւն է անում կանազան դատաստանատների և անձների հետ գաւառական և նահանգական դատաստանատների ընդհանուր կանոններով: (1857 թ. տպված II հատորի I. մասի ընդհանուր գաւառական կանոնադրութենի հիման վրայ): Իւստիցիայի մինիստրի ձեռի տակն էլած անձները իշխանութիւն ունին բարեկարգող քաղաքական կառավարութենի վրայ էնպէս, ինչպէս և միւս դատաստանատների վրայ:

§ 27. Բարեկարգող քաղաքական կառավարութենի վճիռների և կարգադրութիւնների վրայ մասնաւոր մարդկանց դանգատները, որ բարձրագոյն իշխանութենից կախումն ունին, դաւառապետին է տվվում, որն որ էս կանոնադրութենի 21-դ §-ի մէջ ցոյց տված կանոնով է վարվում:

28. Բարեկարգող քաղաքական կառավարութենի մօտ գտնվում են՝ 1.) քաղաքական որբերի հոգաբարձութիւնը, 2.) տների կոմիսիան, 3.) առևտրական պոլիցիան, 4.) տնտեսական պոլիցիան և 5.) աուկցիոնի կամերան:

Բացի էդ բարեկարգող քաղաքական կառավարութենի ձեռի տակն են գտնվում՝ 1.) երդուած բարեխիղճ վկաներ կայքերի վեր գրելու և գին դնելու համար և 2.) երդուած քաղաքական գին դնողներ:

§ 29. Քաղաքական որբերի հոգաբարձութիւնը բաղկանում է նախագահ քաղաքագլխից, երկու անդամներից և առենադպրից: Քաղաքական որբերի հոգաբարձութիւնը, որ պէտք է հիմիկվան որբերի դատարանի տեղը բռնէ, ներգործում է 1855 թ. ապրիլի 24-ին

* Տես «Վաճառականի» № 32:

հաստատուած Թիֆլիսի որբերի դատարանի կանոնադրութեան հիման վրայ և մի և նոյն ժամանակը որբերի դատարանի ընդհանուր կանոնադրութենով ձեռնարկվելով:

§ 30. Քաղաքական որբերի հոգաբարձութիւնը վարում է առ հասարակ բոլոր քաղաքի բնակիչների որբերի և նրանց կայքերի գործերը, բաց ի ժառանգական աղնուականների գործերը, որ ընդհանուր կանոնների հիման վրայ, աղնուականների հոգաբարձութեանն են պատկանում:

§ 31. Տների կոմիսիան բաղկանում է նախագահ քաղաքագլխից, քաղաքի բնակիչների երեք առաջին կարգի մարդկանցից ընտրած 6 անդամից, (§ 6.) ատենադպրից և հաշւապահից: Տների հարկերը պէտք է պահէ բարեկարգող քաղաքական կառավարութեան դանձապետը: Տների կոմիսիան առ ժամանակ հիմիկվան կանոններով է վարվում: Ընդհանուր քաղաքական ժողովը իրաւունք ունի յետոյ ներկայացնել իշխանութեանն իր կարծիքները էդ կանոնները փոփոխելու տեղական պայմաններին և փորձերին նայելով:

§ 32. Առևտրական պոլիցիան վարվում է 1848 թ. յունվարի 24-ին Կովկասեան փոխարքայի հաստատուած կանոնադրութենով: Առևտրական և փողոցի վերակացուները ընտրվում են քաղաքագլխի նշանակված բարեկարգող քաղաքական կառավարութեան անդամներից մէկի իշխանութեան տակը:

§ 33. Տնտեսական պոլիցիան բաղկանում է՝ 1.) քաղաքական կոմիսարներից, 2.) երդուած բարեխիղճ վկաներից, որոնք դանվելու են կայքերի վեր գրելիս և գին դնելիս և 3.) քաղաքական երդուած գին դնողներից: Էս անձների վրայ վերահասութիւն ունենալը յանձնվում է քաղաքագլխի ընտրութենով բարեկարգող քաղաքական կառավարութեան անդամներից մէկին: Էդ անդամի իշխանութեան տակն են տնտեսական պոլիցիայի բոլոր պաշտօնակալները և պարտաւոր են սորանք նրա բոլոր կարգադրութիւնները և հրամանները կատարելու: Եւ էդ անդամների հրամանները կարող է փոխել միայն քաղաքագլուխը, իր վրան առնելով էդ բանի պատասխանատուութիւնը:

§ 34. Աուկցիոնի կամերան բաղկանում է կառավարողից և երդուած աուկցիոնիստներից: Սրանք ներգործում են Ս. Պետերբուրգի աուկցիոնի կամերայի համար տուված կանոնների հիման վրայ: (1857 թ. տպված X հատորի II մասի քաղաքական կանոնների 2181 յօդուածի յաւելուած:)

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄՆ:

Մասնաւոր հասարակական կառավարութիւնների կազմութիւնը և գործերը:

§ 35. Ընտրվածների մասնաւոր ժողովները կազմվում են նախագահ՝ ամեն կարգի մարդկանցից ընտրած գլխաւորից և քաղաքի բոլոր բնակիչների իւրաքանչիւր կարգից ընտրվածներից 6-դ §-ի հիման վրայ: Էս ժողովների գործավարութիւնը կատարում է ընդհանուր քաղաքական ժողովումը դանվող ատենադպիրը: Բայց իւրաքանչիւր մասնաւոր ժողովը իրաւունք ունի դաւառապետի համաձայնութենով ընտրել և առանձին գործավար:

§ 36. Իւրաքանչիւր մասնաւոր ժողովը էն կարգի քաղաքի բնակիչների ներկայացողներն են, որոնցից դրանք ընտրված են: Էսդուր համար էլ իւրաքանչիւր մասնաւոր ժողովը քննում է միայն էն գործերը, որ վերաբերվում են էն կարգ բնակիչներին, որոնցից նրանք ընտրված են: Մասնաւոր ժողովները երկու տեսակ նպատակ ունին՝ 1.) իր կարգի մարդկանց վերաբերեալ գործերի քննելը և 2.) իրանց միջից ընդհանուր քաղաքական ժողովի համար որոշած անդամների և հասարակական կառավարութեան համար պաշտօնակալների ընտրելը:

Ծ ա ն օ թ ու թ ի ւ ն: Քաղաքի բնակիչների առաջին և երկրորդ կարգի մարդկանցից ընտրվածները (§ 6.), որոնք հարկերից ազատ են, ժողովվում են նշանակված ժամանակները իրանց միջից միայն ընդհանուր քաղաքական ժողովի համար անդամներ և քաղաքական հասարակական կառավարութեան համար պաշտօնակալներ ընտրելու համար:

§ 37. Մասնաւոր ժողովները իրանց գործերը քննելու համար նշանակում են իրանց նիստերը իրանց գլխաւորների կարգադրութենով, էդուր մասին ամեն անգամ յայտնելով առաջուց քաղաքագլխին: Իսկ ընտրութիւնների համար և ուրիշ կարգիցը դուրս դիպուածներումը մասնաւոր ժողովների նիստը նշանակվում է բարեկարգող քաղաքական կառավարութեան կարգադրութենով և դաւառապետի հաստատութենով:

§ 38. Մասնաւոր ժողովները կանոնաւոր են համարվում, երբ որ նիստի ժամանակը դտնվում է ընտրվածների երրորդ մասը. իսկ հարկերի ցուցակներն վերաբերեալ գործերը քննելիս, հասարակութենից ում և իցէ դուրս անելիս կամ ընդունելիս պէտք է դտնվի մասնաւոր ժողովների նիստումը ընտրուածների $^{2}/_{3}$ մասը: Ժողով չեկողները պէտք է իմաց տան իրանց չգալու պատճառը իրանց ժողովի գլխաւորին: Իսկ որոնք որ չեն իմաց տայ գլխաւորին իրանց չգալու մասին և օրինաւոր պատճառներ էլ չեն կարող ներկայացնել, կենթարկվեն 1866 թ. տպված քրէական օրէնքների 1971 յօդուածումը նշանակված պատժին: (§ 9):

§ 39. Մասնաւոր ժողովների վճիռները, բաց ի ընտրութիւնների գործերին վերաբերեալները, որոնց մասին գրված է էս կանոնադրութեան երրորդ գլխումը, կանոնաւոր կհամարվեն, եթէ ստորագրված լինեն նիստումը դանվող $^{2}/_{3}$ մասը ընտրվածների ձեռով:

§ 40. Մասնաւոր ժողովները իրանց իրանց ոչինչ կարգադրութիւն չեն անում, այլ դրում են միայն իրանց վճիռները և նրանց կատարումը յանձնում են իրանց կարգի բնակիչների կառավարութիւններին (сословныя управы): Էդ բնակիչների ամեն կարգի կառավարութիւնները ներկայացնում են իշխանութեան հաստատելու վճիռները բարեկարգող հասարակական կառավարութեանն և դա 15-դ §ումը նշանակած ձևով ներկայացնում է էդուր մասին դաւառապետին: Եթէ բնակիչների կարգերի կառավարութիւնները իշխանութեան չհաստատելու գործերի կատարելիս դժուարանան, էն ժամանակը նրանք ներկայացնում են էդուր մասին մասնաւոր ժողովին և եթէ դա հարկաւոր չհամարէ փոխել իր կարգադրութիւնը, էն ժամանակը բնակիչների կարգի կառավարութիւնը ներկայացնում է էդուր մասին բարեկարգող քաղաքական կառավարութեանն, որն որ ներկայացնում է յետոյ իշխանութեանն էդ գործերը 15-դ §ումը նշանակված կարգով:

§ 41. Բնակիչների կարգերի կառավարութիւնները երկու են՝ մէկը քաղաքի երրորդ կարգի բնակիչների գործերի համար և երկրորդը քաղաքի չորրորդ կարգի բնակիչների գործերի քննելու (§ 6.): Իւրաքանչիւր էդպիսի կառավարութիւնը բաղկանում է նախագահ—գլխաւորից, վեց անդամներից, որոնք ընտրվում են մասնաւոր ժողովներումը և երկու ատենակալներից, որոնք ընտրվում են Թիֆլիսումը բնակվող օտար քաղաքացի և օտար ազգի վաճառականներից: Քաղաքացոց, այս ինքն մոքալաքների և ախալմոսուլների գործերի համար նշանակված կառավարութիւնը կոչվում է՝ «Առաջին բնակիչների կարգի կառավարութիւն»: Իսկ հարկատու բնակիչների և քաղաքումը անշարժ կայք չունեցողների գործերի համար նշանակված կառավարութիւնը կոչվում է՝

կարգը իրաւունք ունի հասարակական պաշտօնական ընտրելու նրանց, որոնք բնակիչների թիւմն են և ընտրութեան իրաւունք ունին։

բ. Քաղաքի բնակիչներից ոչ մէկը, բացի նրանց, որոնք առանձին կանոնադրութեամբ հասարակական ծառայութիւններից ազատ են, իրաւունք չունի հասարակական պաշտօն ընդունելուց հրաժարվելու, առանց օրինաւոր և հաստատ պատճառների, օրինակ՝ թագաւորական ծառայութեան, սաստիկ հիւանդութեան և ծերութեան պատճառով։

գ. Եթէ մէկը առաջին անգամ որ և իցէ պաշտօնականար ընտրվի էնդիսի ժամանակը, երբ որ նա առևտրական կամ ընտանեկան գործերի պատճառով հարկաւորութիւն ունենայ քաղաքից դուրս գնալու, կարող է, իր ընտրող բնակիչների կարգի առանձին կարգադրութեամբ, աղատվիլ ծառայութենից։

դ. Ովոր ընտրութեամբ բարձր պաշտօն է վարել որոշված ժամանակ, նա կարող է ստորին պաշտօնի ընդունելուց հրաժարվիլ։

ե. Նա, որը որ առանց վերոյիշեալ պատճառների կհրաժարվի ընտրութեամբ պաշտօնի ընդունելուց, նա կպատժվի 1866 թ. տրված քրէական կանոնադրութեան 1438 յօդուածի հիման վրայ։

զ. Չի կարելի ընտրել մի և նոյն տեղումը ծառայելու կամ էնդիսի պաշտօնի մէջ ծառայելու, որ մէկը միւսից կախումն ունենայ՝ հօրը որդու հետ, աներոջը վեսայի հետ, եղբայրներին եղբօր որդիքներից կամ քրոջ որդիքներից հետ։

է. Ոչ մէկ պաշտօնի համար չեն կարող ընտրվիլ հոդևորականները։

ը. Էս պայմանների կատարելիս, ընտրվածների ժողովը կարող է հասարակական կառավարութեան համար իր անդամներից պաշտօնականներ ընտրել, էն ժամանակը էդպիսի ընտրվածները մի և նոյն ժամանակը ընտրվածի կոչումն էլ պահպանում են։

և թ. Ընդհանուր քաղաքական ժողովի և բարեկարգող քաղաքական կառավարութեան ատենադպիրները և միւս ոռնիկ ընտացող պաշտօնականները կարող են քաղաքումս անչարժ կայք ու արդիւնք չունենալ։

§ 58. Ամեն պաշտօնի համար ընտրվում է նմանապէս և կանդիդատ, որ նա հաստատված պաշտօնականի հիւանդութեան կամ բացակայութեան ժամանակը կատարէ նրա պաշտօնը։ Ինչպէս առաջինը, նմանապէս և երկրորդը մի և նոյն ժամանակն են հաստատվում իշխանութեան ձեռով։

Ծանօթութիւն։ Էս կանոնի զօրութիւնը չէ տարածվում ընտրվածների վերայ, որոնք պաշտօնական չեն համարվում։

§ 59. Թագաւորական ծառայութիւնումը զբանվողները կարող են իրանց ծառայութիւնը չթողած քաղաքական հասարակական պաշտօններ ունենալ, եթէ նրանց գլխաւորները համաձայն լինին էդ բանին։

(Կշարունակվի։)

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԴԱԳՄԱՐԱՅԻ ՄԱՍԻՆ։ Պետերբուրգից դեպեշայով գրում են, որ հոկտեմբերի 12-ին պէտք է կատարվի էնտեղ Պրինցեսսա Դագմարայի սուրբ մեռնով օծելը, իսկ 13-ին Ե. Կ. Բ. Թագաւոր Յառանդի Պրինցեսսա Դագմարայի հետ նշանադրութիւնը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Լիվերպուլ հոկտեմբերի 1։

Էսօր 20,000 հակ բամբակ ծախվեցաւ էստեղ։ Ամերիկայի միջակ տեսակը՝ 15¼ պէնս։ Թէպէտ սեպտեմբերի վերջին բամբակի գները սկսել էին ցածանալ, բայց հիմի նորից բարձրանում են։

Պետերբուրգ հոկտեմբերի 4։

Կուրսը Լօնդոնի վրայ 30½ պէնս։
Պարիժի վրայ . . 320 սանտիմ։
5% Լատարեյով առաջին փոխառութեան տոմսակները 111½ մանէթ։
— Երկրորդինը 107 մանէթ։
Ոսկին . . . . . 6 մ. 27 կ.

Մոսկով սեպտեմբերի 25։

Շաքարի գինը . . . . . 9 մ.
Նուխայ բարձր տեսակ թելը 350 մ.
—Ստորին տեսակը . . 315 մ.
Պարսկաստանի բամբակը . 15 մ.
Կովկասեան տորոնը . . . 6 մ.
Բենդալիայի բարձր տեսակ լեղակը . . . . . 150 մ.
Եավայի լեղակը . . . . . 155 մ.
Սուէարենի մոմը . . 10 մ. 75 կ.

Թիֆլիս հոկտեմբերի 22։

Շաքարը Ֆրանսիացոց 10 մ. 20. կ.
— Ռուսինը . . 10 մ. 80 կ.
Արծաթը 84% . . . 260 մ.
— 72% . . . . 80 մ.
Ոսկին . . . . . 6 մ. 90 կ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիսի Բէալեան գիմնազիայումը պ. **Ս. Վարդանեանցի** գրատանը ծախվում են ամեն տեսակ ռուսերէն թէ դասական գրքեր և թէ ուրիշ ռուսական և գրականական հեղինակութիւններ։

Թիֆլիսումը գրավաճառ Ա. Լենֆիաճեանցի մագազինումը, Բէալեան գիմնազիայումը պ. Ս. Վարդանեանցի մօտ և „Վաճառականի“ խմբագրատունը ծախվում է էս 1866 թվին տպված **Գ. Տ. Ա.-ի և Ա. Ե-ի** աշխատասիրած **„ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ“** անունով գիրքը հատով 40 կոպեկով, իսկ գումարով՝ 35 կոպեկով։

Գրավաճառ պ. Ի. Տէր Մի-քայէլեանցի մագազինումը ծախվում է 1860 թվին տպված **Գ. Տ. Ա.-ի, Ա. Ե-ի** և նրանց ընկերների աշխատասիրած **„ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ“** անունով երեխաների կարդալու գիրքը հատով՝ 15 կոպեկով, իսկ գումարով՝ 12 կոպեկով։

дозволено цензурою
Октября 23-го 1866 г.

Հ. ԷՆԳԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

Խմբագրող և հրատարակիչ
Գ. Տէր Աղէքսանդրեանց։